ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ և 13-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 4-րդ փողոցը՝ նրբանցքներով (սկսվում է Սեբաստիայի փողոցից, հասնում՝ Առնո Բաբաջանյան փողոց), անվանակոչել հայ գրող, արձակագիր, թարգմանիչ Ռուբեն Հովսեփյանի անվամբ՝ «Ռուբեն Հովսեփյան փողոց», «Ռուբեն Հովսեփյան փողոց, 1-ին նրբանցք», «Ռուբեն Հովսեփյան փողոց, 2-րդ նրբանցք»:

2. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 5-րդ փողոցը (սկսվում է Ծերենցի փողոցից, հասնում՝ Եռաբլուր) անվանակոչել հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս և թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ Պերճ Զեյթունցյանի անվամբ՝ «Պերճ Զեյթունցյան փողոց»:

3. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 6-րդ փողոցը՝ նրբանցքով և փակուղով (սկսվում է Մամիկոնյան փողոցից, հասնում՝ Եռաբլուր), անվանակոչել հայ բանաստեղծ, մանկագիր Ղուկաս Սիրունյանի անվամբ՝ «Ղուկաս Սիրունյան փողոց», «Ղուկաս Սիրունյան փողոց, 1-ին նրբանցք», «Ղուկաս Սիրունյան փողոց, 1-ին փակուղի»:

4. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 7-րդ փողոցը՝ նրբանցքով (սկսվում է Շահումյանի 4-րդ փողոցից, հասնում՝ Արտաշես Քալանթարյան փողոց), անվանակոչել հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, սցենարիստ, ռեժիսոր, խմբագիր և գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Աղասի Այվազյանի անվամբ՝ «Աղասի Այվազյան փողոց», «Աղասի Այվազյան փողոց, 1-ին նրբանցք»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ գրող, արձակագիր, թարգմանիչ **Ռուբեն Հովսեփյանը** ծնվել է 1939թ. մայիսի 5-ին Երևանում: 1956 թվականին ավարտել է Հոկտեմբերյան քաղաքի հ.1 միջնակարգ դպրոցը: 1956-1957 թվականներին աշխատել է Հոկտեմբերյանի հաստոցաշինական գործարանում: 1962 թվականին ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը: 1962-1964 թվականներին, որպես երկրաբան, աշխատել է Թուրքմենական ԽՍՀ-ում: 1965-1966 թվականներին եղել է «Ավանգարդ» թերթի արվեստի և գրականության բաժնի վարիչ, 1966-1969 թվականներին՝ «Գրական թերթ»-ի շրջիկ թղթակից, 1970-1974 թվականներին՝ «Սովետական գրականություն» ամսագրի արձակի բաժնի վարիչ: 1974-1975 թվականներին սովորել է Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացներում: 1975-1976 թվականներին աշխատել է ՀԽՍՀ նախարարների խորհրդի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում՝ որպես երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագիր, 1976-1979 թվականներին՝ «Եթերում է Երևանը» թերթի խմբագրությունում: 1982-1987 թվականներին եղել է «Սովետական գրող» (այժմ՝ «Նաիրի») հրատարակչության գլխավոր խմբագիր, 1988-1989 թվականներին ՀԳՄ քարտուղար, 1989 թվականից՝ «Նորք» ամսագրի գլխավոր խմբագիր: 2014 թվականին արժանացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի կոչմանը: Նրա պատմվածքներն ու վիպակները հատկանշվում են արծարծվող թեմաների արդիականությամբ («Որոնումներ», 1965, «Երկու վիպակ: Ճիչ: Հայոց թաղ», 1970, «Հնձան», 1972 (համանուն կինոնկար, 1973), «Ամենատաք երկիրը», 1977 (համանուն կինոնկար, 1983), «Երկար, հրաշալի օր», 1980, «Ճայերը», 1980 (ժողովածուներ): Թարգմանել է Լև Տոլստոյի ստեղծագործություններից, Գ. Գ. Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը»: 1980 թվականին արժանացել է ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվան մրցանակի: 1975 թվականին Մոսկվայի «Պրոգրես» հրատարակչությունը ռուսերեն, հայերեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով լույս է ընծայել նրա «Երևան» ֆոտոալբոմը: Նրա սցենարով է նկարահանվել «Հնձան» կինոնկարը («Հայֆիլմ», 1973):

Ռուբեն Հովսեփյանը մահացել է 2016թ. հոկտեմբերի 27-ին:

Հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս և թարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Պերճ Զեյթունցյանը** ծնվել է 1938թ. հուլիսի 18-ին Ալեքսանդրիա քաղաքում (Եգիպտոս): 1948 թվականին ծնողների հետ տեղափոխվել է Խորհրդային Հայաստան: Սովորել է Երևանի Ղազարոս Աղայանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1956 թվականին՝ ոսկե մեդալով: 1963 թվականին ավարտել է Պյատիգորսկի օտար լեզուների ինստիտուտի հեռակա բաժինը: 1963-1964 թվականներին սովորել է Մոսկվայի երկամյա բարձրագույն սցենարական

դասընթացներում: 1953 թվականին «Պիոներ» ամսագրում տպագրվել է Պերճ Զեյթունցյանի առաջին պատմվածքը՝ «Նվեր»: 1956 թվականին հրատարակվել է նրա ստեղծագործությունների առաջին ժողովածուն «Նրա առաջին ընկերը»: 1956 թվականին գրողին շնորհվել է Հայաստանի երիտասարդական փառատոնի I մրցանակ՝ ոսկե մեդալ, իսկ 1957 թվականին ստացել է ԽՍՀՄ երիտասարդական փառատոնի 2-րդ մրցանակ՝ արծաթե մեդալ: 1965-1968 թվականներին եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի խմբագիրը, 1965-1975 թվականներին՝ հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիայի գլխավոր խմբագիրը, 1975-1986 թվականներին՝ Հայաստանի գրողների միության քարտուղարը: 1986-1990 թվականներին զբաղեցրել է «Պիոներ» ամսագրի գլխավոր խմբագիրի պաշտոնը: 1991-1992 թվականներին եղել է Հայաստանի մշակույթի առաջին նախարարը: Պերճ Զեյթունցյանը հեղինակել է 12 պիես, որոնք բեմադրվել են Երևանի թատրոններում: Գրքերը թարգմանվել են 11 լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն:

Պերճ Զեյթունցյանը մահացել է 1917թ. օգոստոսի 21-ին, Երևանում:

Հայ բանաստեղծ, մանկագիր **Ղուկաս Սիրունյանը** ծնվել է 1949թ. դեկտեմբերի 18-ին, Աշտարակի շրջանի Ուջան գյուղում: 1971 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, այնուհետև հայոց լեզու և գրականություն է դասավանդել Սևանի Գեղամավան գյուղի դպրոցում, 1972-1978 թվականներին աշխատել է «Աշտարակ» թերթի խմբագրությունում, 1978-1989 թվականներին՝ «Գարուն» ամսագրի պոեզիայի բաժնի վարիչ: 1989-1992 թվականներին աշխատել է Հայաստանի մշակույթի ֆոնդում, 1992-1993 թվականներին եղել է ռադիոհեռուստապետկոմի մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագիր, 1993-1994 թվականներին աշխատել է «Ազատամարտ» թերթում, 1996-1997 թվականներին՝ Արագածոտնի մարզային «Կանթեղ» թերթում, 1997-1998 թվականներին եղել է «Պարտեզ» մանկական ամսագրի գլխավոր խմբագիր: 1998-2010 թվականներին եղել է ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության և քարոզչության վարչության գլխավոր խմբագիրը: Գրել է մեծերի և մանուկների համար: Նրա աշխատությունները թարգմանվել են մի քանի լեզուներով: Գրել է նաև կինոսցենարներ: Հեղինակ է ավելի քան 23 գրքերի:

Ղուկաս Սիրունյանը մահացել է 2017 թ. հուլիսի 1-ին:

Հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, սցենարիստ, ռեժիսոր, խմբագիր և գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր **Աղասի Այվազյանը** ծնվել է 1925թ. սեպտեմբերի 7-ին Վրացական ԽՍՀ Աբասթուման ավանում: Սովորել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում (1942թ.), Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, Երևանի գեղարվեստա-թատերական և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտներում (1945-1948թթ.): Տարբեր հիմնարկություններում աշխատել է որպես նկարիչ-մուլտիպլիկատոր, գծագրող, կոնստրուկտոր, լրագրող: 1965-1973 թվականներին եղել է «Գրական թերթի» արձակի բաժնի վարիչ, 1973-1981 թվականներին՝ «Էկրան» ամսագրի գլխավոր խմբագիր: «Հայֆիլմ» կինոստուդիայում աշխատել է որպես ռեժիսոր: 1967 թվականին «Հայֆիլմ»

կինոստուդիայում նրա սցենարով նկարահանվել է «Եռանկյունի» կինոնկարը, որը երկրորդ մրցանակ է ստացել 1968 թվականի լենինգրադյան համամիութենական փառատոնում: 1990-ականների սկզբին խմբագրել է «Հայություն» շաբաթաթերթը: Նրա սցենարով «Հայֆիլմը» նկարել է նաև «Հայրիկ» գեղարվեստական կինոնկարը: 1982 թվականին «Հայֆիլմ» կինոստուդիայում Աղասի Այվազյանն իր «Կովկասյան էսպերանտո» պատմվածքի հիման վրա գրված սցենարով նկարահանել է «Լիրիկական երթ» գեղարվեստական կինոնկարը: Նրա ռեժիսորական հաջորդ աշխատանքն է եղել հայ նկարիչ Վանո Խոջաբեկյանի անսովոր ճակատագրի մասին պատմող «Վանոն և գորոդովոյը» պատմվածքի հիման վրա ստեղծված սցենարով «Վառած լապտեր» կինոնկարը: 2004 թվականին «Նորք» ամսագրի թիվ 1 համարում լույս է տեսել և նույն թվականին Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում բեմադրվել նրա «Չարենցի Ուղղիչ տունը, իմպրովիզ 11 դրվագով» փաստագրական (ավելի ստույգ՝ կենսագրական) դրաման: Ռուսերեն լույս են տեսել նրա «Ընտանիքի հայրը» (Մոսկվա, 1975), «Փառահամար» (Երևան, 1976), «Սինյոր Մարտիրոսի արկածները» (Երևան, 1981), «Թիֆլիսի ցուցանակները» (Երևան, 1981), «Եռանկյունին» (Մոսկվա, 1983), «Աղի կոմսը» (Երևան, 1985), «Մեր տխրությունը Կեժոյի շուրջ» (Երևան, 1986), լիտվերեն՝ «Վիպակների ժողովածու» (Վիլնյուս, 1979), բուլղարերեն՝ «Սինյոր Մարտիրոսի արկածները» (Վառնա, 1981) գրքերը:

Աղասի Այվազյանը մահացել է 2007թ. նոյեմբերի 21-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 4-րդ փողոցը՝ նրբանցքներով, անվանակոչել հայ գրող, արձակագիր, թարգմանիչ Ռուբեն Հովսեփյանի անվամբ՝ «Ռուբեն Հովսեփյան փողոց», «Ռուբեն Հովսեփյան փողոց, 1-ին նրբանցք», «Ռուբեն Հովսեփյան փողոց, 2-րդ նրբանցք», Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 5-րդ փողոցն անվանակոչել հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս և թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ Պերճ Զեյթունցյանի անվամբ՝ «Պերճ Զեյթունցյան փողոց», Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 6-րդ փողոցը՝ նրբանցքով և փակուղով անվանակոչել հայ բանաստեղծ, մանկագիր Ղուկաս Սիրունյանի անվամբ՝ «Ղուկաս Սիրունյան փողոց», «Ղուկաս Սիրունյան փողոց, 1-ին նրբանցք», «Ղուկաս Սիրունյան փողոց, 1-ին փակուղի», Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 7-րդ փողոցը՝ նրբանցքով, անվանակոչել հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, սցենարիստ, ռեժիսոր, խմբագիր և գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Աղասի Այվազյանի անվամբ՝ «Աղասի Այվազյան փողոց», «Աղասի Այվազյան փողոց, 1-ին նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ և 13-րդ կետերով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**